ԾԱՂԿԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 13 -Ի ԹԻՎ 6 ՀԵՐԹԱԿԱՆ
ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ*

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի մայիսի 13-ի թիվ 6 հերթական նիստի օրակարգը՝

1. Ծաղկաձոր համայնքի 2022-2026 թվականների հնգամյա զարգացման ծրագիրը հաստատելու մասին:

2.Հայաստանի Հանրապետության Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող «Սոցիալական ներդրումների և տեղական զարգացման ԼՖ» ծրագրի բաղադրիչ 2-ին մասնակցելու մասին:

3. Անահիտ Գրիգորյանին դրամական աջակցություն տրամադրելու մասին:

4. Համայնքի սեփականություն համարվող գույքը անժամկետ անհատույց օգտագործման տրամադրելու մասին:

5. Համայնքային սեփականություն հանդիսացող գույքը և /կամ/ հողամասը անհատույց և / կամ/ նվիրատվության իրավունքով օտարման դեպքում գրանցման համար անհրաժեշտ ծախսերի կատարման մասին:

6.Ծաղկաձոր համայնքի սեփականություն համարվող հողամասերն աճուրդային կարգով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին:

7. Համայնքային սեփականություն համարվող հողամասը մրցութային կարգով կառուցապատման իրավունքով տրամադրելու մասին:

8. Հայաստանի Հանրապետության սեփականություն համարվող հողամասը մրցութային կարգով վարձակալության տրամադրելու մասին:

9. Համայնքապետարանի կարիքների համար ձեռք բերվող աշխատանքները հրատապ բաց մրցույթի ընթացակարգով անցկացնելու համաձայնություն տալու մասին:

10. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 27-ի թիվ 21 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին

11. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի փետրվարի 15-ի թիվ 35 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

12. Ծաղկաձոր համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 14-ի թիվ 65 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

13. Ծաղկաձոր համայնքի ավագանու մի շարք որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՆԱՐԵԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԼԵՅԼԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ